ІНГОАРМЕНИЯ
Ingo Armenia

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50
հեռ.՝ +37410-59-21-21, ֆաքս +37410-5475-06, ՀՎՀՀ 02535733
ՀՀ ԿԲ գրանցման համար 7, տրված է՝ 28.03.2008թ.
լիցենզիա ԱՊՈ 0005 (0014), www.ingoarmenia.am

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ № MM / 402138

ովագրող: **«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ**
ային տվյալներ: *«Էյչ-էս-բի-սի բանկ Հայաստան» ՓԲԸ*
217001154806 001

Ապահովագիր: *ՀՀ առողջապահության նախարարություն*
Հասցե: *ՀՀ, Երևան, Կառավարական տուն 3*
Հեռախոս: *010543651*
ՀՎՀՀ: *02507171*
Ոլորտ/ռեզիդենտություն: / *0*

ովագրության դաս: **Առողջության ապահովագրություն**
ովագրության ռիսկեր: *Համաձայն թիվ MM 402138 պայմանագրի*

ովագրված անձ:	Համաձայն հավելված 1-ի	Ծննդյան տարեթիվ:	Համաձայն հավելված 1-ի
ովագրված անձի հասցե:	Համաձայն հավելված 1-ի		
ագրի համար:	Համաձայն հավելված 1-ի		

ողության ժամկետը: սկիզբ 11/05/2018 ավարտ 10/05/2019 **երկու օրերը ներառյալ, (երևանյան ժամանակով) :**

Ապահովագրական գումար ապահովագրված յուրաքանչյուր անձի համար:	Համաձայն հավելված 1-ի	Ապահովագրավճար:	Համաձայն հավելված 1-ի
Ապահովագրված անձանց քանակը:	15	Ընդամենը ապահովագրավճար:	AMD 2,850,000
Ընդամենը ապահովագրական գումար:	AMD 90,000,000	Կիրառվող զեղչ:	AMD -
		Վճարման ենթակա գումար:	AMD 2,850,000
		Ոչ պայմանական չհատուցվող գումար յուրաքանչյուր դեպքի և յուրաքանչյուր անձի համար:	Չի կիրառվում
Տարածքային սահմանափակումներ:	ՀՀ, ԼՂՀ		

ովագրավճարիվճարման կարգը : Համաձայն թիվ M44627 հաշվի(ների)

ովագրական պատահարի մասին տեղեկությունը Ապահովագիրը պարտավոր է հայտնել Ապահովագրողին անհապաղ գրավոր կամ բանավոր: Սույն Վկայագրում բոլոր փոփոխությունները կատարվում են կողմերի դարձ գրավոր համաձայնությամբ: Սույն Վկայագրում բոլոր տարաձայնությունները և վեճերը լուծվում են Ապահովագրության կանոնների և ՀՀ օրենսդրության համաձայն: Ապահովագրական հատուցումների նները և կարգը, հնարավոր մերժման դեպքերը, պայմանագրի լուծումն իրականացվում է «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ «Բժշկական ապահովագրության կանոնների» համաձայն, որոնք հանդիսանում են սույն ագրի (պայմանագրի) հավելյալ և անբաժանելի մասը:

գիրը կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ

ՀՈՎԱԳՐՈՂ
ատ Մելիքսեթյան
ադիր տնօրեն, Տնօրինության նախագահ

ստորագրություն

2018

ողող՝ Իդա Սերոբյան

001 կոնֆիդենցիալ, կող՝ 04.20.12 – 1.1

ԱՊԱՀՈՎԱԴԻՐ
Ապահովագրության կանոնները ստացել եմ, ծանոթ եմ և համաձայն
Առողջապահության նախարարություն
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Նելսոն Զուլոյան

ստորագրություն

Վերոնշյալ

MM401370

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ N MM 402138 ՀԱՎԵԼՎԱԾ 1

	Անուն Ազգանուն	Անձնագրի տվյալներ	Ծննդյան տարեթիվ	Հեռախոս	Ապահովագրության ժամկետ		Ապահովագրական գումար	Ապահովագրա-վճար
					Սկիզբ	Ավարտ		
	Հասմիկ Հարությունյան	AM0910260	16/01/1964	091425482	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Աստղիկ Բերեզովսկայա	AH0505385	11/09/1981	094958000	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Ռաֆայել Վարդանյան	AN0372912	29/03/1988	096300555	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Անի Մազմանյան	AM0654931	31/08/1985	098473550	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Միհրան Համբարձումյան	003819158	27/06/1988	099505335	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Հայկ Սայադյան	002872117	01/07/1984	091406004	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Լիլիթ Խաչատրյան	AM0308622	01/12/1967	091328651	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Քրիստինե Խաչատրյան	AM0294933	28/06/1976	099321177	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Արթուր Թադևոսյան	000206227	29/06/1967	091223256	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Ալեքսանդր Էքսյուզյան	005533799	31/01/1983	098188880	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Նաիրա Սերգեևա	AK0498761	16/01/1976	043612616	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Մանաս Մաքսոյան	530194458	13/07/1969	091010113	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Հրաչյա Սարգսյան	AM0265359	16/04/1965	091466162	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Ալբերտ Մուրադյան	AR0209401	12/06/1985	091361033	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Դավիթ Յուխանյան	007931843	04/11/1988	099112111	11/05/2018	10/05/2019	AMD 6,000,000	AMD 190,000
	Ընդամենը						AMD 90,000,000	AMD 2,850,000

ագիրը կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ
ՀԱՀՈՎԱԳՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար՝ Նելսոն Զուլոյան
ստորագրություն
5/2018
արող՝ Իրա Սեդրոյան

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF HEALTH OF THE REPUBLIC OF ARMENIA
02507171

ՀՄԿ «ՍՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԿ
ՀՄԿ «ՍՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԿ
02535733
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՈՒՂԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԱՅԻՆ
ՀՄԿ «ՍՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԿ
ՀՄԿ «ՍՈՍ ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԿ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/18»

MM402138

ք. Երևան 11 մայիսի, 2018թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Նելսոն Զուլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Ա. Մելիքսեթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է առողջության ապահովագրության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 2 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 2 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Ապահովագրողը Ապահովագրված անձանց տրամադրում է անհատական ապահովագրական քարտեր (այսուհետ՝ քարտեր), որոնց կորստի դեպքում Ապահովագրված անձը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին Ապահովագրողին: Կորած քարտերի փոխարեն Ապահովագրված անձանց հնարավորին սեղմ ժամկետում անվճար տրամադրվում են դրանց կրկնօրինակները: Ապահովագրական պատահարը տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձի կողմից քարտը ներկայացվում է Ապահովագրողին և/կամ բժշկական ծառայություններ մատուցողին՝ Պայմանագրով նախատեսված իրավունքների իրականացման նպատակով:

1.4 Ապահովագրված անձանց ցուցակը՝ Ապահովագրության համար անհրաժեշտ տվյալներով սահմանված է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ով: Ապահովագրված անձանց թիվը Պայմանագրի կնքման պահին կազմում է 15 (տասնհինգ) մարդ:

1.5 Ապահովագրված անձանց ցուցակում փոփոխությունների դեպքում (աշխատանքից ազատում կամ ընդունում) ապահովագրավճարը հաշվարկվում է համամասնորեն Ապահովադրի կողմից տրված հայտարարագրերի հիման վրա: Ապահովագրված անձանց ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել յուրաքանչյուր ամսվա 1-ին, 10-ին և 20-ին, ինչի մասին Ապահովադիրը նշված օրերից առնվազն երեք աշխատանքային օր առաջ տեղեկացնում է Ապահովագրողին՝ սահմանված հայտարարագիրը ուղարկելով lilit.torosyan@ingoarmenia.am էլեկտրոնային հասցեին:

1.6 Ապահովագրողը, Ապահովագրության պայմանագրին կից, Ապահովադրին տրամադրում է ապահովագրական վկայագիր, որի պայմանները պետք է համապատասխանեն Պայմանագրի պայմաններին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 2 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 2 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման. ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2.850.000 (երկու միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 2 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 20 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4,1 և N 5 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900000901372, 900000901364
ՀՎՀՀ 02507171

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար
Ն. Զուլոյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
ք.Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47,48, 50
Հեռ.՝ 010 59-21-21
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 21700001154806001
ՀՎՀՀ 02535733

Գործադիր տնօրեն՝ տնօրինության նախագահ
Ա. Մելիքսեթյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
11 մայիսի, 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/18» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
վերով տեսված սբաժնի մարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	66511120/1	Ներկայացվում է կից հավելված N 2.1	դրամ	2.850.000	1	Կառավարության տուն 3	Պայմանագրի կնքման պահից մեկ տարվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900000901372, 900000901364
ՀՎՀՀ 02507171

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար
Ն. Զուլոյան

/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
ք.Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47,48, 50
Հեռ.՝ 010 59-21-21
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 21700001154806001
ՀՎՀՀ 02535733
Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ
Ա. Մելիքսետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2.1
11 մայիսի, 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/18» ծածկագրով պայմանագրի

Ծառայությունների տեխնիկական բնութագիր

ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Ապահովագրության տարածք՝ ՀՀ, ԼՂՀ

Ապահովագրական գումար յուրաքանչյուր անձի համար՝ 6,000,000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:
Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ չի կիրառվում:

Նախատեսված բժշկական ծախսերը հատուցվում են ողջամիտ չափով՝ պայմանով, որ իրականացված բուժումը և/կամ բուժական միջոցները իրավասու բժշկական մարմինների կողմից ճանաչվում են որպես անհրաժեշտ՝ տվյալ հիվանդության, վնասվածքի կամ բժշկական վիճակի համար:

1.1. ՇՏԱՊ ԵՎ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Շտապ բուժօգնություն բոլոր տեսակներ
- 24/7 բժիշկ խորհրդատուի ծառայություններ և դիսպետչերական վահանակ

1.2. ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ

- Ամբուլատոր խորհրդատվություններ
- Ամբուլատոր ախտորոշում
- Լաբորատոր, գործիքային հետազոտություններ
- Ամբուլատոր թերապիա
- Ամբուլատոր վիրաբուժություն
- Ամբուլատոր դեղորայք
- Բժշկի տնային կանչ՝ (սեփական ամբուլատոր բուժկենտրոնից)
- Տնային պայմաններում անալիզների և այլ լաբորատոր գործիքային հետազոտությունների կազմակերպում
- Սուր փսիխոգեն անցողիկ վիճակների բուժում
- Նախատեսված ստանդարտ պատվաստումներ, ինչպես նաև ՀՀ գլխավոր սանիտարական բժշկի կողմից էպիդեմիոլոգիական ցուցումներով առաջարկվող պատվաստումներ, այն դեպքերում երբ պատվաստումները չեն իրականացվում պետական պատվերի շրջանակներում:
- Պատվաստումներ արտասահման մեկնելու համար.
- Պատվաստումներ գրիպի դեմ

1.3. ՈՂՆԱՇԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների (օստեոխոնդրոզ) դեղորայքային բուժում
- Ողնաշարի դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումների (օստեոխոնդրոզ) դեղորայքային բուժմանը հաջորդող ֆիզիոթերապևտիկ միջոցառումներ՝ էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, գերձայնային հաճախականության ալիքներով թերապիա, ամպլիպուլս թերապիա, ուլտրամանուշակագույն ճառագայթում, բուժական մերսում: Ֆիզիոթերապիան սահմանափակվում է պայմանագրի գործողության ընթացքում 1 կուրսով՝ բաղկացած ոչ ավելի քան 15 սեանսից:
- Ողնաշարի ճողվածքի վիրահատական բուժում

1.4. ՖԻԶԻՈԹԵՐԱՊԻԱ (1 կուրս՝ 15 սեանս, տարեկան 1 անգամ)

- Էլեկտրոթերապիա՝ էլեկտրոֆորեզ, ֆոնոֆորեզ, ամպլիպուլս թերապիա, գերձայնային հաճախականության ալիքներով թերապիա, ուլտրամանուշակագույն ճառագայթում
- Ռեաբիլիտացիոն թերապիա, երբ նման բուժումն անհրաժեշտ է Պայմանագրի գործողության ժամկետում տեղի ունեցած վնասվածքից հետո
- Այլընտրանքային բժշկության մեթոդներ՝ ասեղնաբուժություն, բուժական մերսում.

1.5. ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՈՒՄ

- Վիրաբուժություն
- Թերապիա
- Անհատական հիվանդասենյակների արժեքի փոխհատուցում
- Քթի միջնապատի և դրա բարդությունների վիրահատական բուժում Պայմանագրի գործողության ընթացքում առավելագույնը 200,000 ՀՀ դրամի չափով յուրաքանչյուր անձի համար

1.6. ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

- Տեսողության սրության որոշում

- Թերապիա
- Վիրաբուժություն
- Օպտիկական լինզաների, ապակիների և շրջանակների արժեքի փոխհատուցում մինչև տարեկան 30,000 ՀՀ դրամի չափով (անկախ դիոպտրիայի փոփոխությունից) յուրաքանչյուր ապահովագրված անձի համար

1.7. ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ-ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ

- Թերապևտիկ և վիրաբուժական գինեկոլոգիա
- Ծննդօգնություն ներառյալ կեսարյան հատումը (ծածկույթը ուժի մեջ է մտնում պայմանագրի գործողության 9-րդ ամսից)
- Բնականոն և ախտաբանական հղիության վարում
- Հղիության ընդհատում բժշկական ցուցումներով

Հատուցման ենթակա են հիվանդանոցներում առանձնահատուկ հարմարավետ հիվանդասենյակների և անհատական խնամքի համար սահմանված վճարները: Հատուցման ենթակա է հղիության ընթացքում պրոֆիլակտիկ նպատակներով նշանակված դեղորայքի և պատրաստուկների արժեքը:

1.8. ՕՆԿՈԼՈԳԻԱ

- Վիրաբուժություն
- Չարորակ նորագոյացությունների ոչ վիրաբուժական բուժում ստացիոնար պայմաններում (1 կուրս) մինչև 500,000 ՀՀ դրամ

1.9. ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Սրտանոթային վիրաբուժություն (բաց եղանակով)
- Սրտանոթային վիրաբուժություն (փակ՝ ներանոթային եղանակով)

1.10. ՔՐՈՆԻԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Քրոնիկ հիվանդությունների սրացումների հետ կապված բժշկական ծառայություններ
- Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած քրոնիկ հիվանդությունների վիրաբուժական բուժում՝ լիարժեք ապաքինմամբ:

1.11. ՀԱՎԵԼՅԱԼ ԾԱԾԿՈՒՅԹ

- Բարդ դեպքերում՝ երկրորդ կարծիք ոլորտի առաջատար մասնագետների խորհրդատվությամբ
- Կոնսիլիումների կազմակերպում՝ տվյալ ոլորտում առաջատար մասնագետների մասնակցությամբ
- Դիսպանսերիզացիա (ամբուլատոր բուժկենտրոնում) ՝ անհատական քարտի ստեղծում և վարում
- Ատամնաշարի քարտի ստեղծում և վարում
- Ծածկույթից բացառությունների ցուցակում նշված հիվանդությունների և վիճակների գծով առաջնային խորհրդատվություն

1.12. ՏԱՐԵԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԲՈՒԺՁՆՆՈՒՄ

- Թերապևտի (մանկաբույժի) խորհրդատվություն
- Ակնաբույժի խորհրդատվություն՝ տեսողության սրության որոշում
- Ատամնաբույժի խորհրդատվություն
- Գինեկոլոգիական խորհրդատվություններ (կանանց համար)
- Լաբորատոր հետազոտություններ
  - Արյան ընդհանուր քննություն լեյկոբանաձևով
  - Արյան բիոքիմիական հետազոտություններ (գլյուկոզա, լիպիդային պրոֆիլի որոշում)
  - Վահանաձև գեղձի հորմոնների հետազոտություն
  - Մեզի ընդհանուր քննություն
  - PAP քսուք (կանանց համար)
  - PSA (45 անց տղամարդկանց համար)
- Գործիքային հետազոտություններ
  - ԷՍԳ
  - Որովայնի և կոնքի խոռոչի օրգանների ուլտրաձայնային հետազոտություն
  - 35 տարեկանից բարձր կանանց համար մամոգրաֆիա
  - Կրծքագեղձի և վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտություն
  - Էխոսրտագրություն

1.13. ԱՏԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ

- Ատամների կարիեսի բուժում, ուղիների մշակում, այդ թվում պլոմբավորված ատամների բուժում, պլոմբավորում (տարեկան 5 ատամ, անկախ նախնական վիճակից)
- Ատամնաբուժական օրթոպեդիա տարեկան մինչև 90,000 ՀՀ դրամ յուրաքանչյուր անձի համար (սահմանաչափի մեջ ներառված է նաև օրթոպեդիկ պրոթեզավորմանը նախորդող նույն ատամների թերապևտիկ կամ վիարաբուժական բուժման ծախսերը)

- Լնդերի բուժում
- Ատամնաբուժական իմպլանտացիա յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար մինչև 90,000 ՀՀ դրամի սահմաններում Պայմանագրի գործողության ընթացքում
- Սուր ատամնացավով և թարախային պրոցեսով ուղեկցված բարդությունների բուժում:

1.14. ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Պայմանագրով նախատեսված ապահովագրական ծածկույթից բացառություններ են կազմում և ենթակա չեն հատուցման ստորև թվարկված հիվանդությունները, դեպքերը, բժշկական օգնության տեսակները, հետազոտությունները, վիճակները և այլ ծառայությունները, դրանք և դրանց հետ կապված ցանկացած ծախս, անկախ դրանց՝ ապահովագրական ծածկույթում առանձին ներառված լինելու հանգամանքից.

- Առավելապես սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններ և/կամ դրանց հայտնաբերման նպատակով կատարվող հետազոտություններ և/կամ բուժում,
- կերատոկոնուս, դրա բուժման ցանկացած մեթոդ
- Բնածին արատներ, զարգացման անատոմիական առանձնահատկություններ (բացառությամբ քթի միջնապատի վիրահատական շտկման), ժառանգական հիվանդություններ (պարբերական հիվանդություն և այլն),
- Շաքարային դիաբետ (I և II տիպ) և դրանց հետևանքները,
- Անպտղության (առաջնային և երկրորդային) և սեռական դիսֆունկցիայի բուժում, հակաբեղմնավորման մեթոդներ, արհեստական բեղմնավորում, հղիության արհեստական ընդհատում, բացառությամբ բժշկական ցուցումներով՝ հղիության արհեստական ընդհատման դեպքերը, սեռական հորմոնային դիսֆունկցիաներ (դիսմենորեա և հորմոնալ ոլորտի այլ շեղումներ)՝ դրանց ախտորոշումը և բուժումը, վերարտադրողական ոլորտի այլ շեղումները հայտնաբերող և շտկող միջոցառումներ,
- Քրոնիկ հիվանդություններ և վիճակներ, որոնք պահանջում են դինամիկ հսկողություն և պահպանողական բուժում, ինչպես նաև տարիքային փոփոխություններ, որոնց բուժումը հիվանդության թեթևացումն է, օրինակ՝ օստեոպենիա, օստեոպորոզ, օստեոխոնդրոզ և այլն,
- Ողնաշարի և միջողնային սկավառակների դեգեներատիվ դիստրոֆիկ ախտահարումներ, միջողնային սկավառակների ճողվածքներ և պրոթրուզիաներ, օստեոխոնդրոզ, կեցվածքի խախտման շեղումներ, սկոլիոզ, կիֆոզ և այլն, բացառությամբ պայմանագրի ծածկույթով նախատեսված դեպքերի
- Արյան արտաերիկամային մաքրում պահանջող հիվանդություններ, ներառյալ քրոնիկ երիկամային անբավարարություն (պլազմոֆեր, հեմաբսորբցիա և այլն),
- Թոքերի քրոնիկ ոչ յուրահատուկ հիվանդություններ՝ թոքերի էմֆիզեմա, պնևմոսկլերոզ, բրոնխոէկտատիկ հիվանդություն, դիֆֆուզ քրոնիկ բրոնխիտ,
- ՄԻԱՎ վարակ, հաստատված իմունանբավարարության վիճակներ, հեպատիտ B, C, D, E, F և դրանց հետևանքները, լյարդի ոչ վիրուսային ցիրոզներ,
- Նյարդային և հոգեկան ոլորտի շեղումներ, սահմանային վիճակներ՝ նևրոզներ, կպչուն վիճակներ և այլն, էպիլեպսիա, մանկական ուղեղային պարալիչ,
- Կոսմետիկ նպատակներով իրականացվող վիրաբուժություն, ներառյալ պլաստիկ և վերականգնողական վիրաբուժություն (բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումը կամ վիրահատությունը պահանջվում է ապահովագրության գործողության ժամկետում տեղի ունեցած վնասվածքի արդյունքում), խալեր, պոլիպներ, մաշկի և լորձաթաղանթների գոյացություններ՝ խալեր, պոլիպներ, պապիլոմաներ և այլն,
- Վերականգնողական (ռեաբիլիտացիոն) բուժումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումն անհրաժեշտ է Պայմանագրի գործողության ժամկետում տեղի ունեցած վնասվածքից հետո,
- Բժշկական և այլ հարբժշկական սարքավորումներ, սրտի ռիթմը վարող և/կամ կարգավորող սարքերի ձեռք բերում, տեղադրում, վերատեղադրում, սրտի ռիթմի խանգարումը բացահայտող և/կամ կարգավորող միջոցառումներ (էլեկտրոֆիզիոլոգիական հետազոտություններ, էլեկտրոաբլյացիա և այլն) և կարդիովերտեր-դեֆիբրիլյատորներ, լսողական սարքեր և իմպլանտներ, ինչպես նաև կարգավորիչ բժշկական հարմարանքներ ձեռք բերելու և դրանց հարմարեցման համար կատարված ծախսերը, բոլոր տեսակի պրոթեզավորումները և դրանց պատրաստումը, բացառությամբ այն դեպքերի, երբ նման բուժումն անհրաժեշտ է Պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած վնասվածքից հետո,
- Ապահովագրվածի կողմից բժշկի նշանակումներին չհետևելու կամ դրանցից հրաժարվելու հետևանքով առաջացած ծախսերը, ինչպես նաև Ապահովագրված անձի ցանկությամբ կամ առանց բժշկի նշանակման իրականացված բուժման ծախսերը,
- Պրոֆիլակտիկ և կազդուրողական միջոցառումներ, իմունոպրոֆիլակտիկա, մարզասարքեր, արևաբուժարան, ջրային պրոցեդուրաներ, սանատոր կուրորտային բուժում և այլն, քաշի կարգավորում, խոսքի արատների շտկում,

- Ալլերգոդիագնոստիկա, սկարիֆիկացիոն փորձեր, պալարախտ, պոլիոմիելիտ,
- Ալկոհոլի, թմրանյութերի, թունավոր նյութերի և այլ հոգեմետ նյութերի օգտագործման հետևանքով առաջացած ծախսեր, ինչպես նաև Ապահովագրված անձի կողմից ալկոհոլային, թմրանյութեր, թունավոր նյութեր և այլ հոգեմետ նյութեր օգտագործած անձին տրանսպորտային միջոցի ղեկավարումը փոխանցելու հետևանքով,
- Մինչև ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելը նախապես առկա բոլոր հիվանդությունները, հիվանդության ախտանիշերը, վնասվածքները կամ բժշկական վիճակները, անկախ այն բանից դրանք հայտարարագրված են, թե՝ ոչ, և անկախ Ապահովագրված անձի մոտ որոշակի հիվանդության առկայության վերաբերյալ իր տոյակ լինելուց և հիվանդության օբյեկտիվորեն ծագած լինելու ժամանակից,
- Պետական պատվերի ծրագրում ընգրկված հիվանդությունների և իրավիճակների բուժում բացառությամբ համավճարային ախտորոշումների մասով ապահովագրված անձանց կողմից վճարման ենթակա համավճարների
- Մաշկի, եղունգների և փափուկ հյուսվածքների սնկային ախտահարումներ, պսորիազ, էկզեմա
- Աուտոիմուն և շարակցական հյուսվածքի համակարգային հիվանդություններ (համակարգային կարմիր գայլախտ, ռևմատոիդ արթրիտ, արթրոզներ, դերմատոմիոզիտ, համակարգային վասկուլիտներ (հանգուցավոր պերիարտերիիտ, հեմոռագիկ վասկուլիտ), ամիլոիդոզ
- Պայմանագրով չնախատեսված բժշկական կամ այլ ծառայություններ
- Կատարված բուժումը (այդ թվում՝ դեղորայքային) և/կամ բուժական միջոցները, հետազոտությունները ՀՀ կամ միգազգային բժշկական ասոցիացիաների արձանագրություններով ճանաչված չեն որպես անհրաժեշտ տվյալ հիվանդության, վնասվածքի կամ առողջական վիճակի համար: Ապահովագրողն իրավունք ունի մատուցված ծառայության, դեղորայքային բուժման, կատարված կամ նշանակված հետազոտության անհրաժեշտությունը որոշելու համար հարցում կատարել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներին (անհրաժեշտության դեպքում ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր մասնագետներին) և հիմք ընդունել նրանց եզրակացությունները:

1.15. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ

- Շուրջօրյա բժշկական խորհրդատվություն,
- Անհրաժեշտ բժշկական ծառայությունների մատուցման կազմակերպում,
- Ախտորոշիչ հետազոտությունների և բուժման լավագույն տարբերակների մշակում,
- Խորհրդատվություն բժշկական հաստատությունների և մասնագետների ընտրության հարցում,
- Բժշկական սպասարկման հնարավոր լավագույն պայմանների երաշխավորում,
- Պայմանագրով սահմանված բժշկական հաստատություններում մատուցված ծառայությունների դիմաց հաշիվների ստացում և վճարումների իրականացում բացառապես ապահովագրական ընկերության կողմից,
- Մատուցվող բժշկական ծառայությունների որակի, արդյունավետության և համարժեքության անընդհատ հսկողության ապահովում,
- Ամենամյա կանխարգելիչ բժշկական զննումների անցկացում, դրանց արդյունքում հիվանդությունների վաղ հայտնաբերում, բուժում և հնարավոր բարդությունների կանխարգելում:

Ապահովագրվող անձան քանակը առավելագույն քանակը 15 անձ՝ ըստ փաստացի աշխատակիցների քանակի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն ք. Երևան, կառավարության 3 շենք ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900000901372, 900000901364 ՀՎՀՀ 02507171	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ ք.Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47,48, 50 Հեռ.՝ 010 59-21-21 «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 2170000115480600 ՀՎՀՀ 02535733
Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ն. Զուլոյան	Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Ա. Մելիքսետյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 3
11 մայիսի, 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/18» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

ավերով ատեսված աբաժնի սմարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում								
			մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
բալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ուժեղացում» դրամաշնորհային ծրագիր								**Հ/Հ 900000901372**			
1	66511120/1	Առողջության ապահովագրություն	2.090.000	2.090.000	2.090.000	2.090.000	2.090.000	2.090.000	2.090.000	2.090.000	**2.090.000**
բալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր								**Հ/Հ 900000901364**			
1	66511120/1	Առողջության ապահովագրություն	760.000	760.000	760.000	760.000	760.000	760.000	760.000	760.000	**760.000**
Ընդամենը			2.850.000	2.850.000	2.850.000	2.850.000	2.850.000	2.850.000	2.850.000	2.850.000	**2.850.000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ առողջապահության նախարարություն
ք. Երևան, կառավարության 3 շենք
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900000901372, 900000901364
ՀՎՀՀ 02507171

Աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար
Լ. Հովոյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ
ք.Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47,48, 50
Հեռ.՝ 010 59-21-21
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ
Հ/Հ 21700001154806001
ՀՎՀՀ 02535733
Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ
Ա. Մելիքսետյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 4
11 մայիսի, 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/18» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
11 մայիսի, 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/18» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 5
11 մայիսի, 2018թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2018/18» ծածկագրով պայմանագրի

ԲԺՇԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնները մշակված են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան և ներառում են պայմաններ, որոնց հիման վրա «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ (այսուհետ՝ Ապահովագրող), որը գործում է Կանոնադրության հիման վրա, կնքում է կամավոր բժշկական ապահովագրության Պայմանագրեր:

1.1. Համաձայն սույն Կանոնների՝ Ապահովադիրներ, այսինքն՝ Ապահովագրողի հետ ապահովագրության Պայմանագրեր կնքող և ապահովագրավճարներ վճարող անձինք կարող են լինել ցանկացած կազմակերպաիրավական ձևի իրավաբանական անձինք և գործունակ ֆիզիկական անձինք:

1.2. Սույն Կանոնների հիման վրա կնքված ապահովագրության Պայմանագիրը համարվում է կնքված Ապահովագրված անձի օգտին: Այն դեպքում, երբ ապահովագրության Պայմանագիրը Ապահովադրի կողմից կնքվել է իր օգտին, իր վրա են տարածվում սույն Կանոններով նախատեսված Ապահովագրված անձի իրավունքներն ու պարտականությունները:

1.3. Սույն Կանոնների հիման վրա ապահովագրության Պայմանագրի կնքման դեպքում այդ կանոնները դառնում են ապահովագրության Պայմանագրի անքակտելի մասը և պարտադիր են Ապահովագրողի և Ապահովադրի (այսուհետ՝ Կողմեր) համար:

1.4. Չեն ապահովագրվում այն անձինք, որոնք հաշվառված են նարկոլոգիական, հոգենյարդաբանական, տուբերկուլյոզի, օնկոլոգիական, մաշկավեներոլոգիական դիսպանսերներում (վեներական հիվանդությունների պատճառով), ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի վարակների բուժման և պրոֆիլակտիկայի կենտրոններում, I և II կարգի հաշմանադամներ են, եթե ապահովագրության Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Նշված անձանց հետ կնքված կամավոր բժշկական ապահովագրության Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել սույն Կանոններով նախատեսված կարգով:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ

2.1. Սույն կանոնների համաձայն՝ կամավոր բժշկական ապահովագրության օբյեկտներ են Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված ապահովագրական պատահարի դեպքում նրան բժշկական և այլ օգնության ցուցաբերման ծախսերի հետ, որոնք իրենց մեջ ներառում են բուժհաստատությունների կողմից ներկայացված հաշիվների համաձայն իրականացրած ծախսերը, բժշկին վճարվող հոնորարները և բուժման հետ կապված այլ ծախսեր:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

3.1. Սույն Կանոններով ապահովագրական պատահարներ են համարվում ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի դիմելը բուժհաստատություններ բժշկական օգնության (բուժական, ախտորոշիչ, խորհրդատվական, վերականգնողական, առողջական, պրոֆիլակտիկ, այդ թվում իմունոպրոֆիլակտիկ և այլն) և այլ օգնության (այդ թվում՝ սոցիալ-բժշկական) ստացման համար՝ համաձայն սույն Կանոնների, բժշկական ապահովագրության պայմանագրի և բժշկական ապահովագրության ծրագրի, որոնք հանգեցնում են Ապահովագրողի՝ բժշկական և այլ ծառայությունների վճարման պարտականությունների առաջացմանը:

3.2. Ապահովագրական պատահար չի համարվում Ապահովագրված անձի դիմելը բուժծառայությունների և այլ ծառայությունների ստացման համար, որոնք.

3.2.1. նախատեսված չեն բժշկական ապահովագրության Պայմանագրով և ծրագրով;

3.2.2. առաջացել են կամ ստացվել են ալկոհոլի, թմրանյութերի, թունավոր նյութերի և այլ հոգեմետ նյութերի օգտագործման դեպքում, ինչպես նաև Ապահովագրված անձի կողմից ալկոհոլային, թմրանյութեր, թունավոր նյութեր և այլ հոգեմետ նյութեր օգտագործած անձին տրանսպորտային միջոցի ղեկավարումը փոխանցելու հետևանքով,

3.2.3. կապված են տրավմատիկ վնասվածքների և առողջության այլ խաթարման հետ, որոնք առաջացել են Ապահովագրված անձի կողմից հակահիրավական գործողությունների իրականացման արդյունքում,

3.2.4. կապված են Ապահովագրված անձի կողմից իրեն միտումնավոր մարմնական վնասվածքների հասցման, ինքնասպանության փորձերի հետ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը բերված է եղել այդպիսի վիճակի երրորդ անձանց հակահիրավական գործողությունների

3.3. Ապահովագրական պատահար չի համարվում Ապահովագրված անձի դիմելը բուժծառայությունների և այլ ծառայությունների ստացման համար, որոնք առաջացել են հետևյալ պատճառներով.

3.3.1. միջուկային պայթյուն, ճառագայթում կամ ռադիոակտիվ վարակ,

3.3.2. ռազմական գործողություններ, ինչպես նաև զորաշարժեր կամ այլ ռազմական միջոցառումներ,

3.3.3. քաղաքացիական պատերազմ, ցանկացած տեսակի ժողովրդական հուզումներ կամ գործադուլներ,

3.4. Ապահովագրական պատահար չի համարվում բժշկական ապահովագրության ծրագրով որպես ոչ ապահովագրական ռիսկեր սահմանված հիվանդությունների համար Ապահովագրված անձի բուժծառայությունների և այլ ծառայությունների ստացման համար դիմելը:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐ, ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Ապահովագրական գումարը ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրողի կողմից Ապահովագրված անձին վճարվելիք առավելագույն հատուցման չափն է,

4.2. Ապահովագրական գումարը սահմանվում է Կողմերի համաձայնությամբ՝ ելնելով ապահովագրության Պայմանագրով նախատեսված բուժծառայությունների արժեքից և ցանկից և նշվում է ապահովագրության Պայմանագրում: Կողմերի համաձայնությամբ ապահովագրության պայմանագրում կարող են ապահովագրական գումարները սահմանվել արտարժույթով:

4.3. Ապահովագրավճարը Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրով տրամադրվող ապահովագրական ծածկույթի դիմաց Ապահովագրողին վճարվող գումարն է:

4.4. Ապահովագրավճարի մեծության որոշման ժամանակ Ապահովագրված անձին կարող է առաջարկվել լրացնել Բժշկական հարցաթերթիկ: Ապահովագրության դիմումում կամ Բժշկական անկետաներում նշված տեղեկությունները հաստատվում են Ապահովադրի (Ապահովագրված անձի) ստորագրությամբ: Անհրաժեշտության դեպքում նշված տվյալների ճշգրտման համար Ապահովագրողը իրավունք ունի Ապահովագրված անձին ուղեգրել բուժզննության: Եթե Ապահովագրված անձը հրաժարվում է բժշկական անկետա լրացնելուց կամ բուժզննություն անցնելուց, Ապահովագրողը իրավունք ունի հրաժարվել Ապահովադրի հետ ապահովագրության Պայմանագիր կնքելուց:

4.5. Ապահովագրության Պայմանագրով Ապահովագրավճարը կարող է Ապահովադրի կողմից վճարվել ապահովագրության ողջ ժամանակահատվածի համար միանվագ՝ միանգամյա վճարումով կամ տարաժամկետ՝ ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում կանխիկ դրամարկղային եղանակով կամ բանկային փոխանցման միջոցով: Ապահովագրավճարների վճարման կարգը սահմանվում է ապահովագրության Պայմանագրով:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Ապահովագրության Պայմանագիրը կնքվում է մեկ օրացուցային տարով, եթե ապահովագրության Պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Ապահովագրության Պայմանագրի գործողության սկսվելու և վերջանալու ժամկետները սահմանվում են ապահովագրության Պայմանագրում:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

6.1. Սույն Կանոններով կնքված Ապահովագրության Պայմանագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական գումարի սահմաններում իրականացնել Ապահովագրված անձին մատուցված բժշկական և այլ օգնության կազմակերպում և վճարում:

6.2. Ապահովագրության Պայմանագրի կնքման համար Ապահովադիրը դիմում է Ապահովագրողին գրավոր դիմումով, որի ձևը սահմանվում է Ապահովագրողի կողմից և որում հաղորդվում են ապահովագրության Պայմանագրի կնքման համար անհրաժեշտ տվյալներ կամ այլ հնարավոր միջոցով հայտնում է իր՝ Ապահովագրության Պայմանագիր կնքելու մտադրության մասին (բանավոր դիմում, ֆաքս և այլն):

6.3. Ապահովագրողը ապահովագրության Պայմանագրի կնքման որոշումը ընդունում է Ապահովադրի դիմումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Ապահովագրության Պայմանագրի կնքման փաստը կարող է հաստատվել առանձին փաստաթղթի՝ Ապահովագրության պայմանագրի կազմման միջոցով և/կամ Ապահովագրողի կողմից ստորագրված ապահովագրության վկայագրի տրմամբ Ապահովադրին՝ կցված սույն կանոններով:

6.4. Ապահովագրության Պայմանագրի կնքման ժամանակ Կողմերը կարող են համաձայնության գալ սույն Կանոնների առանձին դրույթների չկիրառման և (կամ) ապահովագրության Պայմանագրի՝ գործող ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթների լրացման շուրջ:

6.5. Ապահովագրության Պայմանագրում նշվում են.

- Ապահովադրի անվանումը (ազգանուն, անուն, հայրանուն), գտնվելու վայրը և բանկային

- ապահովագրության ծրագիրը,
- ապահովագրական գումարը,
- ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետը,
- ապահովագրության Պայմանագրի համաձայն վճարման ենթակա ապահովագրավճարի մեծությունը, վճարման կարգը և ձևը,

6.6. Ապահովագրության Պայմանագրին կցվում են.

- Ապահովագրված անձանց ցուցակները Ապահովագրողի կողմից սահմանված ձևով,

6.7. Ապահովագրության պայմանագրին կից ապահովադրին տրամադրվում է ապահովագրական վկայագիր, որում նշվում է.

- Ապահովագրության վկայագրի համարը,
- Ապահովագրողի անվանումը և գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ինտերնետային կայքի հասցեն.
- Ապահովադրի, շահառուի անունը կամ անվանումը, գտնվելու վայրն ու հեռախոսահամարը.
- Ապահովագրության համապատասխան դասը և ենթադասը.
- Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը.
- Ապահովադրի ստորագրությունը, կնիքը (եթե ապահովադիրը իրավաբանական անձ է) և նշում այն մասին, որ ապահովադիրը ծանոթացել է ապահովագրության պայմանագրի պայմաններին.
- Ապահովագրողի կողմից լիազորված անձի ստորագրությունը, ընկերության կնիքը կամ դրանց ֆաքսիմիլային վերարտադրությունները.
- Ապահովագրության վկայագիրը տալու տարին, ամիսը, ամսաթիվը.
- Ապահովագրական գումարի չափը.

6.8. Ապահովագրված անձանց հանձնվում է ապահովագրական քարտ: Ապահովագրական քարտը հանդիսանում է անվանական փաստաթուղթ և պարունակում է տեղեկատու ինֆորմացիա (ապահովագրական վկայագրի համար, ապահովագրական վկայագրի գործողության ավարտը, Ապահովադրի կոնտակտային հեռախոսներ): Որոշ դեպքերում ապահովագրական քարտը կարող է օգտագործվել որպես բուժհաստատության անցագիր:

6.9. Ապահովագրական քարտի կորստի դեպքում Ապահովագրված անձը պետք է անհապաղ տեղեկացնի այդ մասին Ապահովագրողին: Այդ պահից կորած փաստաթղթերը ճանաչվում են անվավեր և չեն կարող հիմք հանդիսանալ ապահովագրության Պայմանագրով սահմանված բուժծառայությունների ստացման համար: Կորած փաստաթղթերի փոխարեն Ապահովագրված անձանց տրվում են կրկնօրինակները:

6.10. Ապահովագրության Պայմանագրի գործողությունը դադարում է հետևյալ դեպքերում.

6.10.1. Ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ավարտով,

6.10.2. Ապահովագրված անձի մահվամբ (տվյալ անձի մասով),

6.10.3. Ապահովագրողի կողմից Ապահովադրի (Ապահովագրված անձանց) առաջ Ապահովագրության պայմանագրով սահմանված պարտավորությունների լրիվ ծավալով չկատարմամբ,

6.10.4. Իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադրի լուծարման կամ ֆիզիկական անձ հանդիսացող Ապահովադրի մահվան, Ապահովադրի կողմից ապահովագրավճարի վճարման պարտականության չկատարման պայմանի, եթե Ապահովագրված անձը իր վրա չի վերցրել Ապահովադրի ապահովագրավճար վճարելու պարտականությունները,

6.10.5. Դատարանի կողմից Ապահովագրության Պայմանագրի անվավեր ճանաչելու վճռի առկայության դեպքում,

6.10.6. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6.10.7. Ապահովագրության Պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել Ապահովադրի կամ Ապահովագրված անձի պահանջով՝ սույն Կանոններով և (կամ) ապահովագրության Պայմանագրով նախատեսված պայմաններով, ինչպես նաև Կողմերի համաձայնությամբ:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՈՒՄ

7.1. Ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է անհապաղ, ցանկացած հնարավոր միջոցով տեղեկացնել Ապահովագրողին իրեն հայտնի դարձած հանգամանքների մասին, եթե այդ հանգամանքները կարող են ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա:

7.2. Ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող հանգամանքների (այդ թվում՝ Ապահովագրված անձի մոտ քրոնիկ հիվանդության ի հայտ գալու դեպքում կամ հաշմանդամության խմբի դասվելու դեպքում) մասին տեղեկացված Ապահովագրողը (Ապահովադրի, Ապահովագրված անձի և այլ անձանց կողմից) իրավունք ունի պահանջել ապահովագրության Պայմանագրի պայմանների

7.3. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը) հրաժարվում է սույն կանոնների 7.2 կետում նշված կարգով ապահովագրության Պայմանագրի պայմանների փոփոխություն կատարել, ապա Ապահովագրողը իրավունք ունի ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոններով սահմանված կարգով դադարեցնել ապահովագրության պայմանագիրը:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ապահովադիրը իրավունք ունի.

8.1.1. Պահանջել, որպեսզի Ապահովագրված անձին տրամադրվեն ապահովագրության պայմանագրով նախատեսված բժշկական ծառայությունները,

8.1.2. Ապահովագրության պայմանագիրը վաղաժամ դադարեցնել մեկ կամ մի քանի ապահովագրված անձանց գծով և պահանջել ապահովագրության պայմանագրով նախատեսվող չափով ապահովագրավճարի վերադարձ,

8.1.3. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում լրացուցիչ համաձայնագրի միջոցով մեկ կամ մի քանի ապահովագրված անձանց գծով փոխել ապահովագրության ծածկույթը՝ անհրաժեշտության դեպքում վճարելով լրացուցիչ ապահովագրավճար,

8.2. Ապահովագրված անձը իրավունք ունի.

8.2.1. Պահանջել ապահովագրության պայմանագրով նախատեսված բժշկական և այլ ծառայությունների մատուցում,

8.2.2. Ստանալ ապահովագրական քարտի կրկնօրինակը դրա կորստի դեպքում,

8.2.3. Բացատրություններ ստանալ ապահովագրության կանոնների, ապահովագրության պայմանագրի պայմանների և ծառայությունների մատուցման կարգի վերաբերյալ,

8.2.4. Ապահովադրին տեղյակ պահել բժշկական ծառայությունների ոչ ամբողջական կամ թերի մատուցման մասին,

8.2.5. Իր վրա վերցնել իրավաբանական անձ ապահովադրի ապահովագրավճարները ժամանակին և ամբողջ ծավալով վճարելու պարտավորությունը դրա լուծարման դեպքում:

8.3. Ապահովագրողը իրավունք ունի.

8.3.1. Ստուգել Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից Ապահովագրության պայմանագրի կատարումը,

8.3.2. Այն դեպքում, երբ պարզվում է, որ Ապահովադիրը կամ ապահովագրված անձինք (ապահովագրված երեխայի ծնողները) հայտնել են կեղծ տեղեկություններ, որոնք ազդում են ապահովագրական ռիսկի վրա, մերժել ապահովագրական պայանագիր կնքելու դիմումը, ապահովագրական հատուցում վճարելու հայտը կամ ժամկետից շուտ դադարեցնել ապահովագրության պայմանագիրը,

8.3.3. Ապահովագրական ռիսկի մեծացմանը բերող հանգամանքների ի հայտ գալու դեպքում Ապահովադրից պահանջել ռիսկի ավելացմանը համաչափ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կամ ապահովագրության պայմանների փոփոխություն,

8.3.4. Ապահովագրավճարի մի մասի կամ ամբողջ ապահովագրավճարի՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից չվճարվելու դեպքում կասեցնել ապահովագրական պայմանագրով իր պարտավորությունների կատարումը կամ դադարեցնել ապահովագրության պայմանագիրը,

8.3.5. Դադարեցնել Ապահովագրության Պայմանագրով սահմանված պարտականությունների կատարումը կամ վաղաժամկետ լուծել ապահովագրության Պայմանագիրը ապահովագրված անձանց նկատմամբ այն դեպքում, եթե ապահովագրված անձանց բացակայում է բուժհաստատության հետ նախօրոք համաձայնեցված ընդունելություններից և հետազոտություններից, կատարել է շտապ օգնության անհիմն կամ կեղծ ահազանգեր, խախտել է բժշկական ռեժիմը, չի կատարել բժշկական նշանակումները և չի հետևել բուժանձնակազմի խորհուրդներին:

8.3.6. Վաղաժամ լուծել ապահովագրության պայմանագիրը այն Ապահովագրված անձանց նկատամամբ, ովքեր այլ անձանց են փոխանցել իրենց ապահովագրական քարտը, որպեսզի վերջիններս ստանան ապահովագրության պայմանագրով նախատեսված բժշկական ծառայություններ:

8.4. Ապահովադիրը պարտավոր է

8.4.1. Ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրավճարը,

8.4.2. Ապահովագրողին տրամադրել ապահովագրության պայմանագրի կնքման և պայմանագրով

պայմանների մասին, կամավոր բժշկական ապահովագրության կանոնների, բժշկական ծածկույթ և պայմանագրի ներքո բժշկական ծառայությունների մատուցման կարգի մասին,

8.4.4. Ապահովել Ապահովագրության Պայմանագրի հետ կապված փաստաթղթերի պահպանությունը,

8.4.5. Վճարել լրացուցիչ ապահովագրավճար ապահովագրական ռիսկի մեծացմանը համաչափ կամ ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող հանգամանքների ի հայտ գալու դեպքում Ապահովագրողի հետ համաձայնության գալ ապահովագրության Պայմանագրի պայմանների փոփոխության շուրջ:

8.5. Ապահովագրված անձը պարտավոր է.

8.5.1. Ապահովագրողին տրամադրել ապահովագրության պայմանագրի կնքման և պայմանագրով նախատեսված պարտականությունները իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն,

8.5.2. Հետևել ապահովագրության Կանոնների, ապահովագրության Պայմանագրի, բուժօգնության ստացման ընթացքում բժշկի նշանակումների, բուժհաստատության կողմից սահմանված կարգի պահանջներին,

8.5.3. Հոգալ ապահովագրական փաստաթղթերի պահպանության համար և վերջիններս չփոխանցել դրանց միջոցով բուժծառայություններ ստանալու նպատակ հետապնդող անձանց,

8.5.4. Ապահովագրական քարտի կորստի դեպքում անհապաղ տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին,

8.5.5. Ժամանակին տեղեկացնել Ապահովագրողին իր անձնական տվյալների (անուն, ազգանուն, բնակության վայր, հեռախոս) փոփոխության մասին,

8.5.6. Ապահովագրողին ընձեռել ապահովագրության Պայմանագրի իրականացման և Ապահովագրված անձանց մատուցված ծառայությունների վճարման հետ կապված ցանկացած բժշակական և այլ հաստատությունների բժշկական փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը,

8.6. Ապահովագրողը պարտավոր է

8.6.1. Ապահովադրին ծանոթացնել Ապահովագրության կանոնների հետ,

8.6.2. Տալ Ապահովադրին սահմանված ձևի ապահովագրական վկայագիր, իսկ Ապահովագրված անձանց՝ ապահովագրական քարտեր,

8.6.3. Ապահովագրական պատահարների դեպքում կատարել ապահովագրական հատուցումներ սույն Կանոններով և ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով,

8.6.4. Հետևել բուժհաստատություններում ապահովագրված անձանց մատուցված բուժծառայությունների որակին և ծավալներին,

8.6.5. Ապահովագրված անձի գրավոր դիմումի համաձայն օժանդակել նրան դատական կարգով հայցի ներկայացմանը՝ կապված իրեն բժշկական ապահովագրության պայմանագրի շրջանակներում մատուցված բուժօգնության որակի հետ, ինչպես նաև Ապահովագրված անձին ոչ լրիվ կամ անորակ բուժօգնության մատուցումը հաստատող բժշկական փորձաքննության արդյունքների ստացմանը:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԲՈՒԺԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Ապահովագրության պայմանագրով նախատեսված բժշկական ծառայություններ ստանալու համար Ապահովագրված անձը կարող է՝

9.1.1. Դիմել իր ապահովագրական քարտում նշված բժշկական ծառայություն և (կամ) բժիշկ փորձագետին քարտում նշված հեռախոսահամարներով:

9.1.2. Դիմել ՀՀ, ԼՂՀ տարածքում գործող լիցենզավորված բուժհաստատություններ կամ անհատ մասնագետների,

9.1.3. Դիմել Շտապ օգնության ծառայությանը:

9.2. 9.1.2 և 9.1.3 ենթակետերի համաձայն դիմելու դեպքում Ապահովագրված անձը պարտավոր է անհապաղ այդ մասին տեղյակ պահել Ապահովագրողին իր ապահովագրական քարտի վրա նշված հեռախոսահամարներով, որից հետո ներկայացնել ապահովագրական հատուցում ստանալու դիմում:

9.3. 9.1.1 կետում նշված կարգով դիմելու դեպքում, եթե ի հայտ է գալիս ապահովագրական պատահար, Ապահովագրված անձը չի իրականացնում որևէ վճարում և ստանում է բուժծառայություններ Ապահովագրողի կողմից տրամադրված ուղեգրերի միջոցով:

9.4. Այլ բժշկական հաստատություններում բուժօգնություն ստացած ապահովագրված անձինք հատուցում ստանալու համար պարտավոր են ներկայացնել հետևյալ փաստաթղթերը.

9.4.1. [illegible] Ապահովագրողի

9.4.2. Մատուցված ծառայությունների դիմաց բուժհաստատության կողմից տրամադրված դրամարկղային չեկեր և (կամ) սահմանված ձևի հաշիվներ: (բացառությամբ 2.1 կետում նշված բժիշկներին վճարված հոնորարների ծախսերի հատուցման դեպքերը):

9.4.3. Տեղեկանք բուժհաստատությունից՝ կնքված համապատասխան բուժ. հաստատության կնիքով, որտեղ նշված են բուժհաստատության կողմից մատուցված ծառայությունների ցանկը և բժշկի կողմից տրված ախտորոշումը (էպիկրիզ):

9.5. 9.4. կետում նշված փաստաթղթերը ենթակա են ներկայացման Ապահովագրողին պատահարի ամսաթվից ոչ ուշ քան 3 (երեք) ամսվա ընթացքում, իսկ նշանակված դեղորայքի կտրոնները՝ նշանակման օրվանից ոչ ուշ քան 1 ամսվա ընթացքում:
Նշված պահանջը չբավարարելու դեպքում, Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը կամ նվազեցնել այն:

9.6. 9.4 կետում նշված դիմումը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային եղանակով՝ personalcontact@ingoarmenia.am էլ. փոստի հասցեով ներկայացնելով բոլոր նշված փաստաթղթերի սքան արված տարբերակները և դիմումի էլեկտրոնային ֆայլը:

9.7. Ապահովագրված անձի դիմումը ընդունվում է վերջինիս կողմից բուժծառայությունների ստացման պահից (ավարտից) երեք ամսից ոչ ուշ: Դրական եզրակացության դեպքում հատուցումը իրականացվում է Ապահովագրված անձից բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի ստացման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

9.8. Հատուցման մերժման դեպքում համապատասխան եզրակացությունը տրամադրվում է ապահովագրված անձին 5 օրացուցային օրվա ընթացքում:

9.9. Սույն կանոնների 9.7 և 9.8 կետերում սահմանված ժամկետները ապահովադրի կողմից կասեցվում է այն դեպքերում, երբ ապահովադիրը բժշկական ծառայություններ ստանալու համար չի դիմել սույն կանոնների 9.1.1 կետում նշված կարգով և նրա ներկայացրած փաստաթղթերում բժշկի ախտորոշումը ամբողջական չէ (թերի է) ինչը թույլ չի տալիս տվյալ պատահարը դասակարգել որպես ապահովագրական: Ժամկետի կասեցումը իրականացվում է մինչև այն պահը, երբ Ապահովագրողը բանավոր կամ գրավոր հարցման միջոցով նշված փաստաթուղթը կազմող բժշկից կստանա ամբողջական ախտորոշում (էպիկրիզ), որը թույլ կտա Ապահովագրողին ստանալ պատահարի ամբողջական պատկերը:

9.10. Կողմերի համաձայնությամբ ապահովագրության Պայմանագրի պայմաններով կարող է սահմանվել Ապահովագրված անձի կողմից ապահովագրության համապատասխան ծածկույթ սահմանված բժշկական և այլ ծառայությունների ստացման հետ կապված ծախսերի Ապահովագրողի կողմից չվճարվող մաս:

9.11. Ապահովագրված անձին բժշկական և այլ ծառայությունների մատուցման հաշիվների վճարման ժամանակ Ապահովագրողը ղեկավարվում է ապահովագրության պայմանագրում սահմանված ապահովագրական գումարով: Ապահովագրության պայմանագրում արտարժույթով սահմանված ապահովագրական գումարների դեպքում, որոնց համարժեքները հանդիսանում են ՀՀ դրամով համապատասխան գումարները, ապահովագրական հատուցումը տրվում է ապահովագրական գումարին համարժեք գումարի շրջանակներում վճարման (հաշվարկման) օրվա դրությամբ տվյալ արժույթի համար ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած փոխարժեքով ՀՀ դրամով:

9.12. Ապահովագրողի կողմից չեն վճարվում Ապահովագրության պայմանագրի գործողության ավարտին առաջացած ծախսերը՝ բացառությամբ Ապահովագրված անձի հրատապ հոսպիտալացման հետ, որը սկսվել է ապահովագրության Պայմանագրի գործողության ընթացքում, սակայն պահովագրության պայմանագրի գործողության ավարտից հետո 15 օրացուցային օրից ոչ ավել:

9.13. Ապահովագրողը կարող է մասամբ կամ ամբողջությամբ մերժել ապահովագրված անձի ապահովագրական հատուցման դիմումը, եթե.

9.13.1. ապահովագրված անձը չի հետևել սույն կանոնների 9.2 կետում նշված ցուցումներին և չի տեղեկացրել ապահովագրողին բժշկական ծառայություններ ստանալու մասին,

9.13.2. ապահովագրված անձի կողմից ապահովագրական հատուցման դիմում ներկայացված դեպքը (պատահարը) համաձայն սույն կանոնների, ապահովագրության պայմանագրի և բժշկական ապահովագրության համապատասխան ծրագրի դասվում է որպես ոչ ապահովագրական:

9.13.3. ապահովագրված անձը խախտել է (անտեսել է) բուժհիմնարկության կողմից սահմանված ռեժիմը,

9.13.4. ապահովադիրը (ապահովագրված անձը) թույլ է տվել սույն կանոնների և ապահովագրության պայմանագրի պահանջների խախտում:

են ՀՀ գործող օրենսդրության հիման վրա:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1. Բժշկական բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ անաշխատունակության թերթիկները, դեղատոմսերը, դուրս գրված էպիկրիզները և այլն, տրվում են Ապահովագրված անձանց՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

11.2. Ապահովագրողը երաշխավորում է բժշկական գաղտնիքի պահպանումը՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

11.3. Ապահովագրողը իրավունք ունի ծանոթանալու Ապահովագրված անձանց՝ նրա հիվանդության պատմությունը, ֆիզիկական և հոգեկան վիճակը, ախտորոշումը, բուժման ընթացքը և դրա արդյունքների կանխատեսումը արտացոլող բժշկական փաստաթղթերին, ինչպես նաև իրավունք ունի օգտագործել տվյալ տեղեկատվությունը ապահովագրության Պայմանագրի իրականացման, Ապահովագրված անձին մատուցված ծառայությունների, վերջինիս իրավունքների պաշտպանության հետ կապված հարցերի լուծման համար:

11.4. Կանոնները կանոնակարգում են ապահովագրության հիմնական պայմանները: Կողմերի համաձայնությամբ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան՝ ապահովագրության պայմանագրում կարող են ներմուծվել սույն Կանոնները փոփոխող պայմաններ: Ապահովագրության Պայմանագրի համաձայնեցված դրույթները առաջնային են Կանոնների նկատմամբ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ առողջապահության նախարարություն ք. Երևան, կառավարության 3 շենք Հեռ.՝ 54-36-51 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900000901372, 900000901364 ՀՎՀՀ 02507171	«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ ք.Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47,48, 50 Հեռ.՝ 010 59-21-21 «Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ Հ/Հ 21700001154806001 ՀՎՀՀ 02535733 Գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Ա. Մելիքսետյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.